

ՌՈՒՍ ՀԵՂԻՆԱԿ ՆԵՍՏՕՐ ԿՈՒԿՈԼՆԻԿԻ ԹՌԻՂԹԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ» ՄԱՍԻՆ

Զերդ պայծառափայլութիւն

Իմ երեսնհինգամեայ գրական գործունէութեանընթացքում իմ խիղճս միշտ ինձ թելազրել է, որ ամեն մի գրողի գըրական գործունէութիւն նոյնպէս պետութեան մատուցւած մի ծառայութիւն է, և որ գրողի պարտականութիւնն է հաղորդել հասարակութեան իրան շրջապատող կեանքի ամեն մի խնդրի ու երեսոյթի մասին իւր արած ու ունեցած հայեացքներն ու հետազօտութիւնները, և այդ մի ջոցով հասցնել պետական անձանց ականջը իւր մտածողութիւնները, որոնց ձեռքին և պիտի գտնուի այդպիսի խնդիրների լուծումը։ Բայց եղել են և այնպիսի դէպքեր, երբ մի որ և իցէ հակառակութեան նշոյլից անգամ խուսափելու նպատակով ես իմ մտածողութիւններս անմիջապէս ներկայացրել եմ պետական անձանց բարեհայեցողութեան, և այնուհետև այլ ևս կարիք եղած չէ կրկնել նրանց, արծարծելով մամուլի մէջ, կամ տպագրութեան տալով։

1847 թուից սկսած ես ծառայութեան գործերով համարեա ամեն տարի այցելել եմ և ուշի ուշով ուսումնասիրել Ռուսաստանի հարաւարեելեան մասը Կովկասի և Ղրիմի հետ միասին, և ահա այս հօթ տարի է, որ մըշտապէս բնակութիւն եմ հաստատել Տագանրոգում, այդ երկիր կենդրոնում։

Բազմաթիւ շահեկան խնդիրների մէջ, որոնք յարուցանում են հետաքրքրութիւն և զբաղեցնում են ամբողջ հարաւային Ռուսաստանը, հայկական խնդիրը ծագել և

առաջ է եկել իմ աչքի առաջ. ես ամենայն սիրով և ուշադրութեամբ հետեւել ու վերահասու եմ եղել. նրա զարգացման աստիճաններին, և որովհետեւ եղած և մեզ հասած լուրերը և տեղեկութիւնները մութ են, բազմա- տեսակ և միմեանց հակառակ և որովհետեւ նրանք յարու- ցանում են հայ ժողովրդի մէջ կասկած ու վախ, այդ պատճառով էլ ես սեպուհ պարտք համարեցի, նախ բան տպագրութեան տալը, այդ մասին ունեցած իմ հայեացք- ներս ու մտածողութիւններս ներկայացնել Զերդ Պայծա- ռափայլութեան բարի հայեցողութեան:

Հայ ազգը ներկայումս, բացի իւր իսկական բնակու- թեան տեղերից Ռուսաստանի և Տաճկաստանի ներքին միջերկական նահանգներում, տարածուած է բաւական խիտ բնակութեամբ Սև և Աղովի ծովերի ամբողջ ջրա- բաշխի շուրջը, և հայ ժողովրդի այդ մասն էլ հէնց պի- տի համարուի հայութեան գլխաւոր հատուածը, որովհետեւ այդ հայերի ձեռքին է գտնում առևտուը և հարստու- թիւնը, և լուսաւորութեան միջոցները, և ինքը լուսաւո- րութիւնն էլ, ինչպիսին որ գոյութիւն ունի նրանց մէջ։

Հայ ազգութիւնը չունենալով քաղաքական անկախու- թիւն, միանում կենդրոնանում է իւր կրօնքի մէջ, որ միւս քրիստոնէական դաւանութիւնների շարքում բռնում է իւր առանձնայատուկ տեղը, և այդ պատճառով էլ հայ հոգևորականութիւնը ունի իւր առանձին, մինչեւսկ քաղա- քական նշանակութիւնը, որ շատ լաւ էր ըմբռնել 'ի Տէր հանգուցեալ ներսէս կաթուղիկոսը. նա իմաստութեամբ կառավարում էր հայկական նուիրապետութիւնը, զիտէր իւր ազգեցութիւնը պահպանել հայ ազգի շահերի վերայ ըոլորամասն և ընդունակ էր խաղաղութիւն և համերաշ- խութիւն պահպանել ազգի մէջ։ Բայց էջմիածնի վանքի հեռաւորութիւնը և դժուարամատոյց լեռնային ճանա- պարհները կարիք է դարձրել Տաճկահայոց համար իրանց հոգեւոր գլուխ ունենալու աւելի մօտ տեղ, ուստի և Փոքը-Ասիայի Սիս քաղաքում գոյութիւն ունի և մի այլ

պատրիարքարան առանձին՝ եկզարքոսով։

Ներսիսի յաջորդ Մատթէոս կաթողիկոսը չի կարող գացել ժմառանգել իւր նախորդի արժանաւորութիւնները և իւր կառավարութեան կարճ միջոցում հակառակութիւն է յարուցել իւր դէմ ոչ թէ միայն իւր հօտի մէջ, այլ և հոգեոր հովիւների, այնպէս որ հոգեորականութիւնը դրդուած անհրաժեշտութիւնից, ստիպողաբար ըմբռստացել է նրա դէմ բացարձակապէս։ Ժողովրդի խիղճը գիտակցելով ներկայ կառավարութեան ձգտութները պահպանելու արդարութիւնը և բարեկարգելու Ռուսաստանի բոլոր ազգերի վիճակը նոր սկզբունքների հիման վերայ, հաստատապէս հաւատում է, որ կ'հասնի աւելի բարւոք ապագայի և, ըստ երեսութին, արդարացի յոյս է տածում և համոզուած է, որ էջմիածնի կաթողիկոսի ընթացքը կ'հրաւիրէ իւր վերայ լուսաւորեալ կառավարութեան լուրջ ուշադրութիւնը և առիթ կ'լինի ձեռնարկելու արմատական միջոցների, որպէսզի պաշտպանուած լինի իրանց եկեղեցին և անձը էջմիածնի կաթուղիկոսի կամայականութիւնից և մինչև իսկ բռնութիւնից, որի ապացոյները մեր աչքի առաջ են։ Ահա այս ակնկալիքների իրագործուելու սպասողութեան վիճակի մէջ հայերի ականջն է ընկել մի լուր, եկած Պետերուրպէտից, թէ ծագած ժողովրդի մէջ նրանց ունեցած վախից, որ իբրև թէ միտք կայ ոչ միայն հրաժարեցնելու Մատթէոսին, այլ և նոյն իսկ վերջացնելու ընդմիշտ կաթուղիկոսութիւնը, փոխանակելով նրա իշխանութիւնը, կամ նրա տեղը դնելով մի ուրիշ կոլլեգիալ հաստատութիւն։

Ամեն մի պետական ձեռնարկութիւն այն չափով միայն արդարացի և օգտաւէտ է, որ չափով որ նա համապատասխանում է ժամանակակից պայմաններին, և յաճախ այն, որ կարող է շահաւէտ լինել 50,000 աշարուց, այժմ կարող է միայն վասակար հետևանք ունենալ։ Այդպիսի ձեռնարկութիւնների կարգը պիտի դասել և էջմիածնի կաթուղիկոսութեան բարձումը ներկայումս Հա-

յերին զրկելը, նրանց ներկայ զարգացման վիճակում, ի-
րանց ծայրագոյն Հովուապետից համահաւասար է զրկե-
լուն նրանց իրանց ունեցած քաղաքական անկախութեան
և վերջին, այն ևս միայն կարծեցեալ մնացորդից կամ
նշանից:

Կոլլեգիալ սիւնհողոսը նրանց համար կունենայ մի-
այն հասարակ, պարզ խորհրդարանի նշանակութիւն-
նրանց յակամայից յուղուած խիղճը կսկսի որոնել իրանց
ծայրագոյն հովուապետին Սսի կաթուղիկոսի անձնաւո-
րութեան մէջ, որ այժմ նրանց խորթ է, և մենք կորց-
րած կամ բաց թողած կըլինենք մեր ձեռքից մեր քա-
ղաքական-բարոյական ազդեցութիւնը այդ ազգի վերայ:

Այժմուայ կաթողիկոսի հասցրած մխաները կապուած
են նրա անձի հետ, և ոչ թէ կաթողիկոսութեան կոչումի,
և նրա բնակութեան տեղի հեռաւորութեան հետ: Հայ
հոգևորականների ժողովը; իմ կարծիքով, կարող է կար-
գագուրկ անել մէկին, եթէ նա իսկապէս անարժան է
իւր կոչման, և յանձնել տալ այդ կարգը միւսին, ար-
ժանաւորագունին, տէրութեան հաստատութեամբ: Այդ
կլինէր և արդարացի, և համապատասխան ժամանակին:
Իսկ ինչ որ վերաբերում է հայոց ծայրագոյն պատրիար-
քի բնակութեան տեղին, որ գտնւում է հայ բնակու-
թեան ծայրագաւառում,—բնականաբար դրա համար ա-
մենայարմար տեղը չի կարելի չնամարել թէողոսիան,
որ հանդիսանում է իբր մի կենդրոնական վայր Ռուսաս-
տանի և Տաճկաստանի այն բոլոր երկիրների համար,
որտեղ սփռուած ապրում է հայ մշտակեաց ժողովուր-
դը: Այդ վայրը նամանաւանդ կարևոր է նրանով, որ,
բացի նրանից, որ կենդրոնական է, այլ և ամառ ձմեռ ըն-
ձեռում է հեշտ և էժան հաղորդակցութեան միջոցներ:
Այդ տեղի ընարութիւնը հայոց խալիքեան դպրոցի հա-
մար ամենաճշորէն հաստատում է թէ իմ միտքս և թէ
նրա հիմնադիրների հեռատեսութիւնը, որ և փայլուն
կերպով արդարանում է նրանով, որ այդ դպրոցը իւր-

գոյութեան հէնց առաջին տարիները ունեցաւ բազմաթիւ աշակերաներ, որ հաւաքուել, եկել էին զանազան շառաւիղների վերայ գտնուած դաւառներից:

Կաթուղիկոսութեան աթոռը այդքաղքը փոխադրելու համար ես նոյն իսկ նիւթական միջոցների դժուարութիւն էլ չեմ տեսնում: Որքաղան գեղարդը շատ հեշտութեամբ կարելի է բերել տալ Թէոդոսիա բոլոր հաւատացեալների միջիթարութեան համար, որովհեան նա այդ ժամանակ աւելի մատչելի կդառնայ ընդհանուրի ուժագնացութեան և երկրպագութեան համար:

Առ այժմ ես դեռ չեմ կասկածում, չեմ տեսնում հայերի մէջ սեպառատիստիկան ձգառում և հակումն. բայց կաթուղիկոսական գահի էջմիածնում գտնուելու հանգամանքի մէջ, էջմիածնի, որ գտնուում է Պարսկաստանի սահմանին մօտ, այդ միտքը, այժմուայ մամուլի ուղղութեան նայելով, կարող է ծագել կամ ինքն ըստ ինքեան կամ կարող է թելադրուել արտաքուստ, այն ինչ երբ կաթուղիկոսութեան աթոռատեղին փոխադրուած կլինի Թէոդոսիա, այդ միտքը և չ'ծագած իսկ պիտի ինքն ըստ ինքեան մեռնի: Կարելի է հաստատապէս ասել, որ կաթուղիկոսական գահը Թէոդոսիա բերելուց յետոյ, և Սսի կաթուղիկոսի իշխանութիւնը, եթէ իսպառ չվերջանայ, գոնէ, կջատուի, և Ռուսաստանը առանց պատերազմի իւր բարոյական հպատակութեան կենթարկէ հայերի մի մեծ բազմութիւն, նամանաւանդ որ Թէոդոսիայի կաթուղիկոսի ազդեցութիւնը բոլոր հայ արևելքի վերայ միշտ պաշտպանութիւն պիտի գտնէ և հետզհետէ աճի և Խալիբեան դպրոցի բարոյական օժանդակութեամբ, որովհետեւ ինքը լուսաւորութիւնը միայն առանց արեան և խռովութեան առաջնորդում է մարդկանց դէպի՛ կանոնաւոր զարգացումն և, յատկապէս միայն լուսաւորութիւնը իւր ժամանակին կարելի կ'դարձնէ Հայոց կաթուղիկոսութեան վերացումն, իսկ մինչև այդ ժամանակը կաթուղիկոսի բոլոր գործողութիւնները և Խալիբեան դպրոցի ուղղու-

թիւնը, որին անկասկած վիճակուած է կարեւոր դեր խաղալ զարգացման գործում, միշտ և անվթար կ'գըտնուեն կառավարութեան աչքի առաջ և հասարակաց կարծիքի ներքոյ:

Ահա սրանք են համառոտաբար իմ մտածողութիւնները Հայկական ինդրի մասին: Զձեռնարկելով դրանց մանրամասն գրելուն առանձին յօդուածի մէջ, ես պարտք համարեցի ներկայացնել Ձերդ Պայծառափայլութեան բարեհայեցողութեան, կ'համարեմ ինձ համար մի առանձին պատիւ, եթէ արժանանամ ստանալու Ձեզանից ձեր կարծիքը այդ մտածողութիւններիս մասին:

Խորին յարգանօք և կատարեալ պատրաստականութեամբ պատիւ ունիմ մնալու Ձերդ Պայծառափայլութեան խոնարհագոյն ծառայ

ՆԵՍՈՐ ԿՈՒԿՈՂՆԻԿ

Տագանրօգ

1865 թ. Յունուարի 6.



Տպագրութեան տալով հայերէն թարգմանութեամբ ոռու հեղինակ Նեստոր Կոկուլսիկի այդ թուղթը, որ նա գրել է 1865 թուի Յունուարի 6-ին և նոյն թուի Փետրուարին ուղարկել է Պետերբուրգ օտարադաւանների գեղարտամենտի պետ կոմս Սիվերսին, մենք նպատակ ունինք դրանով, նախ ծանօթացնել մեր հասարակութիւնը վաթսնական թուականների ոռու մտաւորական դասի այն մասի հայեացքներին ու կարծիքներին Հայերի մասին, որ քիչ թէ շատ մօտ է եղել Հայերին, շփումն է ունեցել նրանց հետ և նրանց կեանքի պայմանները և կրթական ու քաղաքական վիճակը ուսումնասիրելու թոյլ փորձեր է արել. երկրորդ, պարզաբանել, որ մօտ անցեալում, տիրահոչակ Գալիցինի կառավարութեան ժամանակյամառօրէն պտտող լուրերը կաթողիկոսական դահի Պետերբուրգ կամ այլուր փոխադրելու մասին հիմք ու սկզբնաւորութիւն են ունեցել դեռ վաթսնական թուականներին. Երբորդ, ցոյց տալ, թէ Յարութիւն աղա Խալիբեանի, Գաբրիէլ վարդապետ Այվաղեանի և դրանց համախոնների անձնական շահերից և կուրացած կրքերից առաջ եկած ըմբռստութիւնը Հայոց աղջի ընդհանրական հայրապետ Տէր-Մատթէոս երջանկայիշատակ

կաթողիկոսի դէմ որքան մշասակար ազգեցութիւն է ունեցել մեզ համար աղդային-եկեղեցական շահերի տեսակէտից:

Ուու մտաւորականները Հայաստանի մի մասի Ռուսաց իշխանութեան տակ անցնելուց մինչև ցայսօր չեն աշխատել մօտենալ Հայերին, ուսումնասիրել նրանց անցեալն ու ներկան, ուսումնասիրել նրանց պատմութիւնն ու գրականութիւնը և այդպիսով մի ճշգրիտ, հետազոտուած և լուրջ քննութեան բովից անցկացրած նիւթ ու ատաղձ պատրաստել, որի վերայ և պետական անձինք կարող լինէին հիմնել իրանց յատկապէս Հայերի ազգային-եկեղեցական գործերի վերաբերմամբ անելիք անօրինութիւնները և հրատարակելիք օրէնքները. նրանց մի խոշոր մասը մի դատապարտելի լուսութիւն է պահպանել Հայերի մասին, մի սառն, կատարեալ անտարբեր և անհամարհական վերաբերմունք է ցոյց տուել, չըսովորելով Հայոց լեզուն, պատմութիւնը, կարծես, Հայերը դաւմուխ, խըրխըզ կամ այնու լինէին, և ոչ 1600 ամեայ մի եկեղեցի, մի հարուստ գրականութիւն և իւր առանձնայատուկ կողմերով որոշ քաղաքակրթութիւն ունեցող մի ազգ, որ իւր չափով ու արժէքով իւր լուման է ձգել մարդկութեան ընդհանուր քաղաքակրթութեան դանձարանը. մի մասն էլ թէկ հետաքրքրուել է, ձգտումն է ցոյց տուել թիչ շատ մօտենալու, ուսումնասիրելու. հայ կեանքը, բայց չիմանալով Հայոց լեզուն, օգտուել է իւր հետազոտութիւնների համար օտար, մութ և պղտոր աղքիւրներից, որից և առաջ է եկել այն ցաւալի հանգամանքը, որ բոլոր այդ ճանապարհով կատարուած ուսումնասիրութիւնները չեն ունեցել և չէին էլ կարող ունենալ լուրջ բնաւորութիւն, այլ միայն պատճառ են եղել թիւր, սիալ կարծիքներ տարածելու ռուս բազմամբոխ ժողովրդի մէջ Հայերի մասին, որ նրանք, ըստ դաւանութեան, հերետիկոս են, նրանց եկեղեցին միաբնակ-մոնօֆիզիտ վարդապետութիւնն է քարոզում, ևտիքեան աղանդին է պատկանում, որ նրանք Նրէաների պէս և նրանց բնաւորութեամբ մի վախկոտ, անհայրենիք, առանց բարձր իդէալների, զուտ իրանց անձնական շահերի յետակից ընկած առեւրական ժողովուրդ են և այլն, մի մասն էլ այս կամ այն քաղաքական հանգամանքն ի նկատի առնելով և վնասակար համարելով Հայերին Ռուսաստանի համար. գիտութեամբ և չար գիտաւորութեամբ աշխատել և ձգտել է ամենասվատթար գոյններով պատկերացնել Հայերին, դիտմամբ ծըռմըռնելով և իրանց նրանց մասին ունեցած ճշգրիտ տեղեկութիւնները, ատելութիւն սերմաններով ուռա միամիտ ամբոխի մէջ դէպի Հայերը և մատնանիշ անելով նրանց վերայ պետական մարդկանց, որ նրանք սեպառատիստ են, մակարոյժ են, ուռաներին ատե-

ցող են, ոռւս պետութեան, ոռւս շահերին հակառակ, որ նրանք յեղափոխական են, ահարեկիչ են և այլն։ Մեր խօսքն այս-աեղ մի քանի ազնիւ բացառութիւնների մասին չէ ի հարկէ, որոնց թիւը շատ սահմանափակ է, այլ կատկովների, Վելչչկոնների, Սուվորինների, Մենշիկովների և սրանց բազմաթիւ համախոհների մասին, որոնց անուններն անյայտ չեն և որոնց այդ ուղղութեամբ կատարած սիրագործութիւններն ամենքի աչքի առաջ են։

Կուկոլնիկը պատկանում է ոռւս մտաւորականների երկրորդ խմբին։ Նա իրրե հեղինակ և դրող հետաքրքրուում է իրան շըր-ջապատող Հարաւ-Արևելեան Ռուսաստանի կեանքով, որտեղ ապ-րում, գործում և տնտեսական, առնարական և լուսաւորութեան աեսակէտից որոշ գեր էին խաղում Հայերը իրրե գիւղացիններ, իրրե խոշոր վաճառականներ, իրրե դպրոցների հիմնադիրներ, լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն տարածողներ և այլն և այլն-նա Տագանրոգում ունէր շատ հայ բարեկամներ և ծանօթներ, գլխաւորապէս Նոր-Նախիջևանից, որոնցից ոմանք ընդմիշտ բը-նակութիւն էին հաստատել այդանում, Հարաւ-արևելեան Ռուսաս-տանի այդ շահաստանում, և որտեղ նրանք ունէին իրանց անները, գրասենեակները, խանութները և կալուածներն ու ագարակները, քաղաքի շըրջակայքում։ Նրա մօտ բարեկամներից էին Յարութիւն աղա Խալիբեանը, Մկրտիչ Գոգոյեանը, Գաբրիէլ վարդապետ Այ-վազեանը և ուրիշ շատերը։ Նա յաճախ պատահում էր իւր հայ բարեկամների տներում թէ Տագանրոգում և թէ Նախիջևանում և բնականապէս ծանօթ էր նրանց վարք ու բարքին, նրանց խո-հերին ու մտածմունքներին և նրանց միջոցով և Նախիջևանում կատարուող և կատարուած հայ ազգային-եկեղեցական գործերին ու հանգամանքներին։ Եւ նրա ծանօթութիւնն այդ ասպարիզում այդ նեղ շըրջանակի մէջ բաւականին հիմնաւոր էր, որովհետև Խա-լիբի բոլոր կարևոր թղթերը կայսեր, ներքին գործոց նախարա-րին, Օտարադաւանների գեղարտամենտի պետին, Նոր-Ռուսիոյ Գեներալ-Նահանգապետին, Եկատերինոսաւար նահանգապետին և Տագանրոգի քաղաքապետին նրա ձեռքով էին գրւում։ Բացի զրա-նից, նրա ձեռքով են գրուել միքանի հարուստ հայերի կտակներ, հայ դպրոցների կանոնագրութիւններ, ինչպէս Գոգոյեան օրի-որդաց դպրոցի հիմնական կանոնները և Գոգոյեանի կըտա-կը, Խալիբեան դպրոցի կանոնադրութիւնը և այդ դպրո-ցը գիմնազիոն դարձնելու հիմնական կանոնները և այլն և այլն, Բայց կուկոլնիկի ունեցած այդ տեղեկութիւնները Հայե-րի մասին հէնց այդ նեղ Տագանրոգի և Նախիջևանի շըր-ջանակով էլ սահմանափակուում էին։ միւս տեղերի, նոյն

իսկ Հարաւ-Արևելեան Ռուսաստանի Հայերի մասին ունեցած նրա աեղեկութիւնները շատ հատուկտոր էին, մեծ մասով հաւաքուած գուած դարձեալ նոյն Խալիքից և նրա համեմուններից, այնպէս որ նրա ասածներն իւր թղթի մէջ, թէ ինքն ուսումնասիրել է ու գիտէ Հայերի կեանքը Ղրիմում և Կովկասում և թէ ծանօթ է Հայկական խնդրի զարգացման աստիճաններին՝ չափազանցութիւն է, զրուած միայն իւր խօսքին ոյժ տալու համար, չենք խօսում արդէն նրա գրածների մասին Տաճկահայաստանի և Ռուսահայաստանի Հայերի վերաբերմամբ, որոնք ոչ մի լուրջ քննադատութեան չեն կարող դիմանալ:

Եւ դեռ այն էլ պէտք է ասել, որ Նոր-Նախիջևանի Հայերի և նրանց ազգային-եկեղեցական գործերի մասին նրա ունեցած աեղեկութիւններն էլ շատ միակողմանի են և հեռու իսկական ճշմարտութիւնից, որովհետև հաւաքուած են գլխաւորապէս մի կուսակցութեան պատկանած մարդկանց բերանից, ասել է թէ ոչ բոլորովին յստակ ազբիւրից, որի հիման վերայ կարելի լինէր տաել, թէ այդ իսկապէս հայկական կեանքի պատկերն է վաթսը-նական թուականներին, ուրեմն հայկական խնդրի իսկական սկզբնապատճառ և առիթ:

Եւ մենք չենք հասկանում, թէ այդ լինչ հայկական ինդիր է, որ ծագել ու զարգացել է Կուկոնիկի աչքի առաջ: Եթէ այդտեղ խօսքն ընդհանուր պատմական հայկական խնդրի մասին է, — նրա ծագումը յամոնայն դէպս այն եօթ տարուայ ընթացքում կամ նոյն իսկ անցեալ դարու 47 թուականից չէ, երբ նա մշտական բնակութիւն է հաստատած եղել Տագանրոգում կամ ծառայութեան գործերով տեղափոխուած է եղել Հարաւ-Արևելեան Ռուսաստան և այցելել, ուսումնասիրել է այդ երկորի զանազան կէտերը և նրա բնակիչների կենցաղավարութիւնը ու այդ միջավայրում յուղուող խնդիրները: Ընդհակառակը Հայկական խնդիրը ծագել և գոյութեան իրաւունք է ստացել Ռուսաստանում, ինչպէս յայտնի է, դեռ շատ հին ժամանակները, երբ նոյն իսկ Պետրոս Մեծն և Եկատարինէ Բ. Կայսերուհին հովանաւորել են Հայերին, մեծամեծ յոյսեր տալով նրանց և ընդառաջ գնալով նրանց բաղձանքների իրագործման: Իսկ եթէ խօսքը մի ինչ որ նոր, Կուկոնիկի աչքի առաջ վաթսնական թուականներին Հարաւ-Արևելեան Ռուսաստանում ծագած ու զարգացած հայկական խնդրի մասին է, — մեր պատմութիւնն այդպիսի խնդիր չի ճանաչում, որովհետև այդպիսին իսկապէս գոյութիւն էլ ունեցած չէ յիշուած ժամանակները:

Կուկոնիկը հայկական խնդիր ասելով, գուցէ, հասկացել է,

որ շատ հաւանական է, այն խռովութիւնները, որ 42-46 թուականներից ծագել էին Նոր-Նախիջևանում և հետզհետէ զարգացել ու ծաւալուել էին Նախիջևանի և Բեսարաբիոյ բոլոր թեմում։ Եթէ մեր այդ ենթագրութիւնները ճիշտ են և նա հայկական խնդիր ասելով, իսկապէս հասկացել է Նախիջևանի եկեղեցական գումարների, Թէոդոսիայի Խալիքեան գոլրոցի հիմնարկութեան, Գարբիէլ Վարդապետի, առանց կաթողիկոսի հաւանութեան ու գիտութեան, Բեսսարաբիայի թեմի առաջնորդ կարգուելու խնդիրները և այդ առթիւ էլ Խալիքեանի և Այվազեանի Մատթէոս կաթողիկոսի դէմ ըմբռստանալս պատճառով առաջ եկած խռովութիւնները, պէտք է ասենք, սր այդտեղ ոչ մի հայկական խնդիր չկայ։ Այդ մի զուտ ներքին ազդային-եկեղեցական գործերի վերաբերեալ գժառութիւն էր, որ ծագել ու զարգացել էր մի քանի ազգեցիկ, գործի գլուխ կանգնած մարդկանց անձնական շահերից և կուրացած կրթերից և բարդացել, մեծ ծաւալ էր ստացել տէրութեան այդ բուն Հայոց ներքին գործերին խառնուելու հանդամանքից։

Կուկոլնիկը Հարաւ-Արևելեան Ռուսաստանում, Ղրիմում և Կովկասում ապրող Հայերին համարել է հայութեան գլխաւոր հատուածը, որովհեակ, ասում է նա, նրանց ձեռքին է գտնուում առևտուրը, հարստութիւնը, լուսաւորութեան միջոցները և հէնց ինը լուսաւորութիւնը, ինչպիսին որ գոյութիւն ունի նրանց մէջ, Այդպէս է արդեօք։—Անկասկած ոչ, Հայութեան գլխաւոր մասը միշտ համարուել, համարում է և պիտի համարուի բուն Հայաստանի հայութիւնը, որ իւր հոծ բազմութեամբ, իւր երկրագործ և արհեստաւոր դասի ահագին մեծամասնութեամբ, իւր հայախօսութեամբ, իւր մայրենի սրբազնն ծէսերի ու սովորութիւնների, իւր նուիրական աւանդութիւնների պահպանութեամբ, իւր բնիկ երկրի կրծքին ամուր կպած լինելու, ազգային եկեղեցու, նախնեաց կանգուն և փլուած յիշատակարանների հետ կապուած լինելու վիճակով միշտ քաղաքականապէս և բարոյապէս կազմել է հայութեան սիրտն ու արմատը։ Հայաստանի հայութիւնը հայութեան հաստարմատ և հաստաբուն ծառի արմատը, բունը, կոճղն է, իսկ հայրէնիքից դուրս ապրողները նրա մեծ կամ փոքր ճիւղերն են միայն, որոնք հեռացած լինելով ծառի հիւթալից բնից ու արմատից, շատ անգամ բաւարար հիւթ ու նիւթ էլ չեն ստանում, ուստի և ենթակուած են Թառամելու, Թօջնելու, գուցէ, և չորանալու վտանգին։ Եւ այդ գէպքում չեն օգնիլ նրանց ոչ հարստութիւնը, ոչ առեստուրը, ոչ նոյնիսկ լուսաւորութիւնը, եթէ միայն քաղաքական հանդամանքներն այնքան նպաստաւոր

Հինեն, որ նրանք կարողանան պահպանել իրանց կապն անխղելի կեղրոնի հետ. եթէ նրանք անընդհատաբար հայրենի ջրով չը- ջրուեն, մայրենի հիւթով չպարարուեն:

Արդ Հարաւ-Արևելեան Ռուսաստանի՝ Նախիջևանի, Ղզլարի, Մողգոկի, Արմաւրի, Ստաւրոպոլի, Հաշտարիսանի և Ղրիմի զանա- զան քաղաքների հայութիւնն երբէք, նամանաւանդ վաթսնական թուականներին, մի հոծ քաղմութիւն չի կազմել, այլ ցրուած ապ- րել է այստեղ ու այստեղ, ինչպէս այժմ էլ ապրում է, օվազիս- ներով և կղղեակներով, ենթարկուած իրան շրջապատող քաղմամբոխ ժողովրդի ազդեցութեան թէ լեզուի, թէ վարք ու բարք և թէ ազգային նուիրական աւանդութիւնների տեսակէտից: Այդ կող- մից, ուրեմն, նա երբէք էլ չի կարող համարուել հայութեան գըլ- խաւոր հատուած, ինչպէս որ չի կարող համարուել գլխաւոր և հարստութեան և մեծածաւալ առևտուր ունենալու տեսակէտից, որովհետեւ այդ ասպարիզում այդ ժամանակներն անկասկած ա- ռաջընթաց ու գերազանց էին նրանից Պօլիսը, Զմիւռնան և Թիֆ- լիսն իրանց շրջաններով:

Ինչ որ վերաբերում է լուսաւորութեան զարգացման գործին հայութեան այդ հատուածի մէջ, որին Կուկոլնիկը մեծ կարևորու- թիւն է տալիս և փայլուն ապագայ վերագրում, այդ տեսակէտից էլ մենք կարծում ենք, որ նա չարաշար սիսալում է, որովհետև լաւ ծանօթ չէ բուն հայութեան կեանքին ու գործերին, ծանօթ չէ աւելի խոշոր հայ հատուածների կեանքի պայմաններին: Խա- լիբեան դպրոցը, որ այդ հայութեան լուսաւորութեան միակ աղ- բեւրն ու կեդրոնն էր, այդ ժամանակները տակաւին ոչինչ չէր տուել ժողովրդին, որովհետեւ դեռ միայն եօթ տարի էր, որ գո- յութիւն ունէր և, որ ցաւալին է, ապագայում էլ չէր խոստանում շատ բան տալու, քանի որ նրա հիմքը խախուտ էր, ուղղութիւնն անհաստատ և քանի որ նրան յատկացրած էր ուրիշ նպատակնե- րի ծառայելու, չենք խօսում արդէն այն հանգամանքի մասին, որ նա միայն 7 տարի գոյութիւն ունենալուց յետոյ, արդէն սկսել էր ընկնել թէ նիւթականի սղութիւնից և թէ ուրիշ պատճառներից: Ցամենայն դէպս Խալիբեան դպրոցը չէր կարող համեմատուել ներ- սիսեան կարոցի հետ, որ արդէն վաղուց էր, որ գոյութիւն ունէր և թէև շարունակում էր կաղ ի կաղ և գայթ ի գայթ, բայց այսուամենայնիւ շարունակում էր, ամեն տարի շատ հայախօս և հայամիտք պատանիներ տալով ազգին և օվազիսնեկեղեցական ուղղութեան մէջ յարատեելու և դոյն ուղիով տարէցարի առա- ջադիմելու առհաւատաշեաներ մատուցանելով հայութեան:

Կուկոլնիկն ասում է, որ Մատթէոս կաթողիկոսը չէր ժա-

ռանգել իւր նախորդի արժանաւորութիւնները և յարուցել էր իւր դէմ թէ իւր հօտը և թէ այդ հօտը հոգուողներին, այնպէս որ հոգեորականութիւնը բացարձակապէս ըմբոստացել էր նրա դէմ: Որ ի Տէր հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսը չունէր իւր երջանկայիշատակնախորդի արժանաւորութիւնները, — այդ ճշմարիտ է, բայց որ նա յարուցած լինի իւր դէմ իւր հօտը, այդ ուղիղ չէ: Այդ դարձեալ մի ակնարկութիւն է Նախիջևանի խոռվութիւնների մասին, որ սակայն, ինչպէս յայտնի է, սկիզբն էին առել նրա դրուատած Ներսիսի ժամանակ, նրա պատճառվ և նրա արած մի անյաջող կարգադրութեան շնորհիւ, և միայն տեսել, շարունակուել և զարգացել էին Մատթէոսի ժամանակ: Յայտնի է, որ Ներսէս կաթողիկոսը հաստատել էր Յարութիւն Խալիբեանին ընդհանուր երեցփոխ, պատուիրելով նրան հաւաքել Նախիջևանի և դրա գիւղերի բոլոր եկեղեցիների թէ առձեռն պատրաստի, թէ տարէցտարի գոյանալիք և թէ սրան-նրան պարագ արուած եկեղեցական գումարները և իւր մօտ պահել իւր առաջ միայն պատասխանատու լինելու և իրան միայն հաշիւ տալու իրաւունքով և պարտականութեամբ: Իսկ նրա հաճութեամբ նշանակուած Մատթէոս Վեհապետեան առաջնորդը հիմուելով իւր առաջնորդական իրաւունքների վերայ, սկսել էր հաշիւ պահանջել Խալիբից և, երբ նա չէր կատարել նրա պահանջը, դիմել էր ներքին գործոց նախարարին, բողոքելով ընդհանուր երեցփոխի դէմ և իրաւունք պահանջելով, որից և սկսուել և առաջ էր եկել եկեղեցական գումարների խնդիրը կոչուած խոռվութիւնները:

Ինչ որ վերաբերում է հոգեորականների ըմբոստանալուն կաթողիկոսի դէմ, այդ դժբախտաբար ճշմարիտ է: Առաջին ըմբոստացողն եղել էր հէսց ինքը Գարդիէլ վարդապետը, որ յենուելով Խալիբի ու նրա համախոնների և իշխանաւորների իրան ցայց տուած պաշտպանութեան վերայ, բացարձակապէս չէր կատարել իւր կաթուղիկոսի պատուէրներն ու հրամանները. նա կաթուղիկոսի հրաւէրներին էջմիածին գնալու մերժողական պատասխան էր գրել, նա չէր ուղանցել ճանաչել կաթուղիկոսի ուղարկած թեմի քննիչ Անդրէաս եպիսկոպոսին և իւր պաշտպան իշխանաւորների ձեռքով աշխատել էր յետ ուղարկել տալ նրան. նա չէր ընդունել, չէր թողել պաշտօնի մէջ մտնելու կաթուղիկոսի կանդակով ո. Խաչ վանքի վանահայր կարգուած Աղափիրեան Գրիգոր վարդապետին: Այվաղեանի, Խալիբի և Խորէն Գալֆայեանի գրդամբ Գօլսի Պատրիհարքն իւր իշխանների հետ միասին խաղաղութիւնը պահպանելու որդիական յորդորներ էին գրում կաթուղիկոսին. դրանց դրդմամբ Խաչառուր աղա Լազարեանը Պե-

տերբուրդից խրատ էր կարդում Հայոց հայրապետին, սպառնալով և տէրութեան օրէնքը յիշեցնելով նրան. դրանց գրդմամբ այդ ժամանակուայ Ս. էջմիածնի Միւնհողոսի Պրոկոռոր Ն. Միրաքեանը թշնամացել էր կաթողիկոսի հետ և նրա բոլոր գործողութեամբ տէրութեան առաջ վատթար գոյնով և վասակար ուղղութեամբ էր նկարագրում, որի հիման վերայ և Պետերբուրդից Կովկասի բարձրագոյն իշխանութեան ձեռքով յանդիմանական բնաւորութիւն կրող ցուցմունքներ էին լինում կաթողիկոսին և ի լրում այդ բոլորի և այդ բոլորի ազդեցութեան ներքոյ Ս. էջմիածնի միաբանութիւնը բացարձակապէս ապստամբել էր կաթողիկոսի դէմ և 1864 թուի ամառը 106 յօդուածով մի մեղադրական ակտ կազմելով նրա դէմ, ուղարկել էր հայ ականաւոր մարդկանց, հրաւիրելով նրանց ուշադրութիւնը կաթողիկոսի կաշառակերութեան և ապօրինի գործողութիւնների վերայ և կոչ անելով ժողովրդին գալու ազատելու Ս. էջմիածինը իսպառ աւերուելու, քանդուելու վտանգից:

Ի՞նչ պիտի լինէր դրա հետևանքը:—Ի հարկէ, յուզմունք և իրարանցում ժողովրդի մէջ, որից անկասկած առաջ եկած պէտք է համարել և այն շշուկը կաթողիկոսութիւնը վերացնելու և կաթողիկոսին հրաժարեցնելու մասին, որի մասին և խօսում է Կուկոլնիկը: Այդ լուրերը հիմք ունէին, թէ ծագել էին անցած-դարձի ազդեցութեան ներքոյ վախից ու կասկածից, այդ մենք հաստատ չ'գիտենք, բայց կարծում ենք, որ առաջինը, այսինքն կաթողիկոսին հրաժարեցնելու խնդիրը, պէտք է մի փոքր էլ հիմք ունեցած լինի, որ աղօտ կերպով երևում է և Կուկոլնիկի թղթից: Միայն որ ուսւ հեղինակը չարաչար սխալում է, երբ կարծում է, որ մի ազգընափիր հայրապետի, ինչպիսին Հայոցն է, հրաժարեցնելը հնարաւոր է գլուխ բերել այդպէս հեշտութեամբ և այն միայն հոգևորականների ժողովով: Բռնութեամբ, ուժով, ի հարկէ, ամեն բան կարելի է անել: Բայց թէ որքան այդ համապատասխան կ'լինի արդարութեան, օրինականութեան և պատմական անողոք օրէնքների սկզբունքներին, այդ էլ մի ուրիշ խնդիր է, չենք ասում արդէն այն, որ այդպիսի բռնութեամբ գործադրուած մի իրաւունք յաճախ ամենաերին չի հասնում իւր նպատակին և փոխանակ օգուտ բերելու պետութեան շահերին, ընդհակառակը շատ ու մեծամեծ մվասների պատճառ է լինում:

Մեր եկեղեցական պատմութիւնից մենք կարող ենք հաւասարանալ, որ Հայոց կաթողիկոսներն իրանց վեհ պաշտօնի մէջ միշտ եղել են հաստատուն և յարատե մինչև իրանց մահը և ոչ մի կերպով և ոչ ոք իրաւունք չի ունեցել հրաժարեցնելու նրանց,

գահընկէց անելու, հակառակ նրա կամքի: Այս մի երկու գահընկէցութեան դէպքերն էլ, որ յիշում են պատմութեան մէջ, սակաւաթիւ բացառութիւններ են, եղած միայն ամենաչափան պատճառներով, երբ կաթուղիկոսը հակումն է ցոյց տուել դաւաճանել հայ եկեղեցու դաւանական սկզբունքներին... վատանգիլ եկեղեցին: Եւ յետոյ, թնչպէս և մը իրաւունքով կարող է ձեռնհասութիւն ունենալ այդպիսի մի մեծ գործ կատարելու հոգեորականներից միայն բաղկացած մի ժողով, երբ Հայոց կաթուղիկոսը ընտրում է ամբողջ ազգի հոգեկոր և աշխարհական ներկայացուցիչների ժողովով: Այդ նշանակում է այն, որ նախ, մի մասով, ուրեմն, կարելի է համարւում քանդել ընդհանուրի արածը, երկրորդ, նըշշանակում է զատել հայ հոգեորականութիւնն իւր ժողովրդից և նրան յատկացնել, հակառակ հայ եկեղեցու սկզբունքներին, մի ֆունկցիա, որ նա երբէք չէ ունեցել, քանի որ հայ հոգեւորականութիւնն իւր ամենափոքրիկ պաշտօնեաններից սկսած մինչև հայրապետն ընտրում է ժողովրդից, ծագում, ըզմում է ժողովրդից և անքակտելի կապերով կապուած է ժողովրդի հետ, չկազմելով մի առանձին դասակարգ ժողովրդից անջատ շահերով:

Կուկոլնիկի ասելով, բացի նրանից, որ հոգեորականների ժողովով կարելի է Հայոց կաթուղիկոսին հրաժարեցնել, այլ և այդ ակտը գործադրելը Մատթէոսի վերաբերմամբ արդարացի էլ կլինէր: Արդ, թնչ էր՝ արել Մատթէոսը: Որ նա չէր դաւաճանել Հայոց եկեղեցուն դաւանաբանական տեսակէտից, այդ յայտնի է, ուրեմն հրաժարեցնելու գլխաւոր առիթը բացակայում էր: Ի՞նչ էր մնում, ուրեմն, մէջտեղը: Կուկոլնիկն ասում է, որ Մատթէոսն անարժան է եղել կաթողիկոսութեան, որովհետեւ, նախ, նա իւր կարճատեւ կաթուղիկոսութեան միջոցին զինել է իւր դէմ թէ հոգեորականներին և թէ աշխարհականներին, երկրորդ; Որ նա կառավարել է եկեղեցին կամայականօրէն և բռնութեամբ, որի ապացոյներն իբրև թէ աչքի անաջ են եղել:

Արդ, որմնը են այդ ապացոյները: — Անկասկած կաթողիկոսի արած կարգադրութիւնները Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի համար, նրա բռնած դիրքը դէպի Խալիքն ու Այվաղեանը և նրա հրատարակած կոնդակներն այդ վերջինների դէմ, որոնց մասին լիակատար տեղեկութիւն ունէր Կոկոլնիկը Խալիքից և Այվաղեանից, ի հարկէ, գունաւորուած, միակողմանի և կուսակցական հոգուով լցուած և տաելութեան ու թշնամութեան կնքով դրոշմուած: Նախ, մենք պէտք է ասենք, որ չի երկում, որ ընդհանրապէս բոլոր թեմերի Հայերն էլ դժգոհ եղած լինին կաթուղիկոսից, այլ միայն Նախիջևանի և Բեսսարաբիոյ Հայերն են, որոնց

մէջ դժգոհութեան նշաններ են երեսում, և այն էլ դժգոհ են այդ թեմի ոչ բոլոր Հայերը, այլ մասնաւորապէս Նախիջևանի Հայերի մի մասը միայն, զլխաւորապէս Խալիքի և Այվազեանի համախոնները, այն ինչ՝ միւս խողոր մասը, Հայրապետը և նրա համախոնները, ընդհակառակը, շատ բաւական էին կաթողիկոսից, Երկրորդ, մենք չենք տեսնում կաթողիկոսի Բեսսարաբիոյ թեմի վերաբերմամբ, կամ, լաւ է ասել, Խալիքի, Այվազեանի և Խալիքեան դպրոցի վերաբերմամբ արած կարգադրութիւնների մէջ, կամ այսականութեան և բռնութեան հետքեր, կարելի է տիրող կարգերի տեսակէտեղ կաթողիկոսի այդ կոնդակներն ու կարգադրութիւնները շատ էլ չէին համապատասխանում օրէնքի տառացի և բառացի պահանջներին, բայց յամենայն դէպս նրանք բռնութիւնն ու կամայականութիւն չէին:

Մատթէոս կաթողիկոսը բարձրանալով Լուսաւորչի գահը, տեսնում է իւր թեմերից մէկի մէջ եկեղեցական գումարների պատճառով առաջ եկած խոզովութիւններ, սկսուած իւր նախորդի օրերով և թէև վերջացած Այվազեանի ձեռքով ու միջնորդութեամբ և տէրութեան հաճութիւնն էլ այդ մասին ստացուած, բայց հիմնաւորապէս վախճան չդատած և, որ գլխաւորն է, աւարտուած եկեղեցու շահներին ոչ բոլորովին համապատասխան եղանակով, և հրամայում է վերստին վերաբննել գործը. նա ժամանելով էջմիածին, իմանում է, որ հակառակ սրբագործուած ու օրէնքի ընաւորութիւն ստացած սովորութեան ու կարգի, առանց կաթողիկոսի հաւանութեան ու գիտութեան, լոկ միայն մարմնաւոր իշխանութեան հաճութեամբ և կարգաւորութեամբ Բեսսարաբիոյ թեմի առաջնորդը փոխադրուած է Հաշտարխան և նրա տեղը կարգուած է Այվազեան Գարբիէլ վարդապետը, և կամենում է այդ կարգադրութիւնները փոխել տալ, որպէսզի նուազած շինի Հայոց ընդհանրական հայրապետի իրաւասութիւնը և մասուած հայ եկեղեցու շահները. նա տեղեկանալով Խալիքեան դպրոցի հիմնարկութեան հանգամանքներին, նրա ուղղութեան և նպատակներին, գալիս է այն եղրակացութեան, որ ապօրինի և միանգամայն անսպատակայարմար է, որ այդ դպրոցը պահուի թեմի եկեղեցիների արդիւնքով, որով միայն կարող էր և պէտք է պահուէր թեմական հոգեոր դպրանոց՝ թեմի կրօնական-բարոյական պահանջներին բաւարարութիւն տալու համար, և արգելում է, աշխատում է կարճել եկեղեցական գումարների տուուչութիւնը և մինչև այդ ժամանակները տուածների էլ հաշիւն-է պահանջում և այլն և այլն:

Ճանկալի էր և միանգամայն օգտաւէտ ի հարկէ, որ Մատթէոս կաթողիկոսը տեղեկանալով, որ Նախիջևանի և Բեսսարաբիոյ լուսնաշ 1911

թեմի մէջ բոլոր եղած-կատարուածը ստացել է պետութեան հաւանութիւնն ու վաւերացումն, գործած լինէր աւելի խոհեմութեամբ և տակտով և անմիջական յարաբերութիւն սկսելով գործի գլուխ կանգնած պետական անձանց հետ, իւր արած և անելիք կարգադրութիւնները հիմնէր գոյութիւն ունեցած կարգերի վերայ, հասկացնելով միանգամայն, որ Խալիքի յամառելը ճշտիւ հաշիւ ներկայացնելու իւր ձեռքն անցած եկեղեցական գումարների մասին և Այլազեանի ընդդիմանալն իւր անմիջական իշխանաւորի կարգադրութիւններին, բացի նրանից, որ հակառակ է Հայոց եկեղեցու կանոնական իրաւունքներին, այլ և հակառակ է նոյն իոկ պետական օրէնքներին և կարգապահութեան տարրական կանոններին, Բայց յամենայն դէպս, կրկնում ենք, այդտեղ, կաթողիկոսի այդ գործողութիւնների մէջ, միայն տակտի և խոհեմութեան խնդիր կարող էր լինել, և ոչ բռնութեան ու կամայականութեան, ինչպէս որ հաւատացրել էին Կուկոլնիկին Խալիքն ու Այլազեանը և ինչպէս որ գրանք իրանց բազմաթիւ՝ բողոքներով հասկացրել էին պետական անձանց:

Զպէտք է մոռանալ, որ Մատթէոս կաթողիկոսը Տաճկաստանից եկած հայ հոգւորականներից լինելով, անծանօթ Ռուսաստանի կարգերին և ընտելացած հայոց հայրապետական իշխանութեան եկեղեցական գործերում բացարձակօրէն գործադրելու գաղափարին, յետագայ երկու կաթողիկոսների նման՝ Դէորգ Դ.-ի և Մկրտիչ Ա.-ի, դժուարութեամբ էր սեղմւում Ռուսաստանում տիրող աստիճանաւորութեան կարգ ու կանոնի սահմաններում և իւր գործավալարութեան եղանակը դժուարութեամբ յարմարեցնում ընդունուած սովորական կառավարութեան ձևերին: Մենք մինչև իսկ համոզուած ենք, որ տէրութիւնն ուշադրութիւն էլ չէր դարձնիլ կաթողիկոսի ըստ ձեւին միայն ոչ օրինական գործողութիւնների վերայ, եթէ միայն չլինէին Խալիքն, Այլազեանը և դրանց համախոհները, որոնք անդադար ումբակոծում էին նախարարութեան դիւանն իրանց բողոքներով և լցնում էին ներքին գործոց նախարարի ականջը, թէ կաթողիկոսը հակառակ է տէրութեան արած կարգադրութիւններին, թէ նա ոտքի տակ է տալիս կայսերական օրէնքը, թէ նա մինչև իսկ կայսեր հաճութեամբ հաստուած պռաջնորդին հալածում է, և այլն և այլն, ուրեմն և նա ըմբոստ է, չի ճանաչում Պօլօֆենիան, չի ընդունում պետութեան իրաւասութիւնը Հայոց եկեղեցական գործերում, ուստի և կարիք կայ հասկացնելու նրան, ցուցմունքներ անելու և մինչև իսկ հարկադրիչ և բացառակի կարգադրութիւններ անելու նրա վերաբերմամբ, որի վերայ ակնարկում է իւր թղթի մէջ և Կուկոլնիկը,

ասելով, թէ Հայերը ակնկալում են, որ աէրութիւնը լուրջ ուշադրութիւն կդարձնէ կաթուղիկոսի գործողութիւնների վերայ և արժատական միջոցների կձեռնարկէ չափ ու սահման դնելու նրա կամայականութեան ու բռնութեան:

Ի՞նչ էին էջմիածնի միաբանութեան մէջ եղած խլրտումները և միաբանների կազմած բողքագիրն իւր բազմաթիւ մեղաղբական կէտերով, Նախ, մենք պէտք է ասենք, որ բողքողներն ու խըլլոտումներ յարուցանողները բոլոր միաբանութիւնը չէր, այլ միայն մի մասը, 18 հոգի, որոնք և ստորագրել էին բողքագիրը. երկրորդ, այդ մի բացառակի երեսոյթ չէր. պատահած միայն Մատթէոս կաթուղիկոսի օրերով նրա դէմ, այլ մի սովորական երկոյթ, որ ընդարձակ կամ սահմանափակ ծաւալով եթէ ոչ միշտ, գոնէ, յաճախ աեղի է ուսնեցել նոր շրջանի Հայոց կաթուղիկոսարանում, Կիրակոս Վիրապեցուց սկսած, Այդպէս է եղել Վիրապեցու օրերով, Դաւիթ-Դանիէլեան կորուների ժամանակ, Յովհաննէս Կարբեցու ժամանակները, Գէորգ և Մկրտիչ կաթուղիկոսների ժամանակները և նոյն իսկ նորոգ հանգուցեալ. Մատթէոս Բ.-ի կարճատե կաթուղիկոսութեան օրերով՝ երբ յայտնի դարձաւ, որ էջմիածնի միաբանութիւնն իւր ամբողջութեամբ իւր ըմբռութարք ու բարքով յուսահատութեան դուռն է հասցրած եղել իւր հայրապետին այն աստիճան, որ մինչև իսկ նա պատրաստուած է եղել հրաժարական մատուցանելու, թողնելու կաթուղիկոսական գահը:

Ի՞նչն է եղել և ի՞նչն է այդ երեսոյթի պատճառը.—Նախ, Հայոց կաթուղիկոսների գլխաւորապէս միայն բարոյական ոյժ ունենալը և նրանց խուսափելը, զանազան հանգամանքների աղգեցութեան ներքոյ, բռնութիւն գործ դնելու իրանց միաբանների վերաբերմամբ և իշխանութեան ձեռքով նրանց պատժելու. երկրորդ, մեր ազգային բնաւորութիւնից բղխած պատմական յատկութիւնը՝ Հոյին չանդուրժելու հայի իշխանութեան. Յիշինք Արտաշիր թագաւորի Պարսից Վռամ թագաւորի առաջ իւր ապատամբնախարարների վերաբերմամբ արտասանած խօսքերը, որ շատ բնորոշ են.—«Որպէս սովոր են ի բնէ թշնամոնել զտեարս իւրեանց, ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զշար կամաց իւրեանց զիսնդիրս, քանզի միշտ իշխանափոխք լիալ են և տիրատեացը»:

Մենք սրանով չենք կամենում, ի հարկէ, ասել, որ Հայոց կաթուղիկոսներն ընդհանրապէս և մասսաւորապէս Մատթէոս Ա.-ը պատմասութիւններ չի ունեցել, այլ որ նրա այդպակասութիւններն այնպիսի բաներ չեն եղել, որոնց անհնար եղած լինէր համբերել

ի սկը մայրաթռուի խաղաղութեան ու շահերի: Եւ հայ ականաւորները, որոնց ուզարկուած է եղել այդ բողոքագիրը, զգուշացել են, թողել են նրան անհետևանք, շատ ամելի խոհեմ գտնուելով, քան թէ բողոքը ստորագրող սրբազնն հայերը: Միայն Յարութիւն աղա Խալիբեանը, որի քիմքին շատ քաղցր էր եղել միաբանների ձեռնարկածը, աշխատել է գործ դնել նրան Նախիջևանում, բայց չի յաջողել, որովհետև այդ ժամանակները հնաց, այդտեղ գտնուած Անդրէաս եպիսկոպոսը դատական քննչի ձեռքով յետ է պահանջել բողոքագիրը իրեն կաթուղիկոսի հասցէին ուղղած զրպարտութիւն և իրան Խալիբին էլ դատի ենթարկել իրու այդ զրպարտութիւնը գործադրող անձի: Այդտեղ, ուրեմն, մէկ անգամ էլ կրկնուում են Արտաշրի ժամանակներն եղած դէպքերը, միայն դերերը փոփոխուած: Այն ժամանակ հոգևորականութեան զլուսն է եղել, որ յորդորել է նախարարներին յետ կենալու իրանց չար ու վասակար դիտաւորութիւնից, որ գգուշացել, ընթացք չեն տուել գործին, յիշելով անմոռաց Սահակ Պարթևի ասած խօսքերը: «Քաւ լիցի ինձ փոխանակել զիմ հիւանդ ոչխար ընդ առողջ գաղանի և այլն»:

Եւ ի պատիւ մեր բարեխնամ տէրութեան պէտք է ասել, որ նա ամենին և ոչ մի հակումն չի ցոյց տուել օգտուելու այդպիսի հանգամանքներից թէ Մատթէոսի ժամանակ նրա դէմ և թէ անցեալում, նա ընդհակառակը, օրինապահութեան և կարգապահութեան բարի օրինակ հանդիսանալով, երբեմն, ինչպէս Կարբեցու ժամանակ, հնաց ինքը իւր միջոցներով խեղդել է իրանց օրինական իշխանաւորի դէմ ըմբռոստացած էջմիածնի միաբանների ցոյցերը, այն ինչ Մատթէոսի դէմ կազմած բողոքագրի մէջ եղել են այնպիսի մեղադրական կէտեր, որոնք ուղղակի նպատակ են ունեցել հրաւիրել տէրութեան ուշադրութիւնը, ինչպէս, օրինակ, բողոքագրի 81 և 7 յօդուածները, որոնցից առաջինն ասում էր: Կաթուղիկոսը զայրացած լինելով փոխարքայի վերայ նրա իւր մի առաջարկութիւնն անուշադիր թողնելու համար, հրամայելէ գուրս տանել Սիհնակորսից կայսեր պատկերը և տեղաւորել ժատենաղարանում, և ջարդուփշուր է արել պատկերի շրջանակը: Բացի սըրանից, նա արգելել է գոհացողական մաղթանք կատարել կայսերական տօներին կայսեր և կայսերական տանարկնաշտութեան համար: իսկ երկրորդը ասում էր: «Օտարական ականաւոր այցելուների վանք գալու ժամանակ, կաթուղիկոսն ընդունում է նըրանց իւր լիցում առանձնապէս, հեռացնելով բոլոր գտնուող մերձաւորներին, և նրանց հետ գաղանի բանագնացութիւններ է անում»:

Գանք այժմ կաթողիկոսութիւնն իսպառ վերացնելու խնդրին, որ Կուկոնիկը վաթսնական թուականներին ոչ օգտաւէտ և անժամանակ է համարում, իոկ ապագայում, երբ լուսաւորութիւնն աւելի տարածուած կլինի Հայերի մէջ, բոլորովին հնարաւոր և օգտաւէտ իսկ: Կուկոնիկի այդպիսի դատողութիւնն այդպիսի մի մեծ ու կարևոր խնդրի մասին դարձեալ նրա Հայոց ազգային ու եկեղեցական պատմութիւնը շիմանալու, հայ կեանքն իսպառ չճանաչելու հետեանքը պէտք է համարել, Կաթուղիկոսութիւնը Հայոց կեանքում մի այնպիսի պատմական երեսոյթ է, որ սկիզբն առնելով ամենահին ժամանակներից, Հայոց եկեղեցու սկզբնաւորութիւնից, պատմական որոշ հանգամանքների ազգեցութեան ներքոյ, բնական ճանապահնով դարձացել և բնական ճանապարհով էլ ներկայ բնաւորութիւնն է ստացել, ուստի և արուեստականօրէն նրան ոչնչացնել ոչ մի կերպով կարելի չէ: Կաթողիկոսութեան դաղափարն իբրև հայկական պատմական կեանքի բնական երեսոյթներից մէկն այնպէս կպած է հայութեան, որ կարելի է ասել արիւն ու մարմին է դարձել նրա մէջ, և Հային ոչ մի կերպով չի կարելի բաժանել նրանից. նա իւր ներկայ կազմակերպութեամբ, իւր ներկայ բոլոր Հայերի վերայ ունեցած կրօնական-բարոյական իշխանութեան ծաւալով հայ եկեղեցու, հայ կեանքում խաղացած և խաղացող կարեսոր դերի արդիւնքն է, Հայը կռուել, արիւն է թափել. նա մինչև իսկ զոհ է ըերել իւր եկեղեցու անկախութեան համար իւր մարմառոր իշխանութիւնը, ուստի և կաթողիկոսական իշխանութիւնը, որ հայ եկեղեցու ինքնուրոյնութեան և անկախութեան բնորոշ արտայայտութիւնն է, յարատե պետի լինի իւր ներկայ բնաւորութեամբ, մինչև չփոխուրին հայ կեանքի պատմական պայմանները: Եւ լուսաւորութեան տարածուելն ու աւելի դարձանալն Հայերի մէջ, որ Կուկոնիկի ասելով, ապագայում պէտք է իբրև թէ հնարաւոր դարձնէ կաթուղիկոսութեան բարձումը, ընդհակառակը, պէտք է աւելի ևս ամրապնդէ Հայոց եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը, որովհետեւ նա տգիտութեան արդիւնք չէ, մնացած հին խաւար դարերից, այլ կրկնում ենք, հայ անկախ եկեղեցու և հայ կեանքի կարեսոր աղդակներից մէկը, եւ բանի որ, Կուկոնիկի ասելով, կաթուղիկոսութիւնը իրական իշխանութիւն էլ չէ, այլ միայն կարծեցեալ, ի՞նչ կարիք կայ, ուրեմն, մտածել նրա իսպառ վերացնելու մասին. նա իրական չէ, ուրեմն, մնասակար էլ չէ պետութեան շահերին. նա գոյութիւն ունի միայն իբրև հայ քաղաքական կեանքի անկախութեան վերջին մնացորդ, իբրև եկեղեցական իշխանութիւն. թող, ուրեմն, մնայ նա իբրև այդպի-

սին և շոյէ միայն Հայի ազգային ինքնասիրութիւնը, առանց մի որևէ իրական խորհուրդ ունենալու բաղաքական տեսակէտից:

Կուկոյնիկը խօսելով հակական խնդրի մասին, որ իրքեւ թէ առաջ չի եղել, այլ ծագել ու զարգացել է նրա աչքի առաջ, աւելի մած խորհուրդ է վերագրում կաթուղիկոսական աթուատեղին, քան նոյն իսկ կաթուղիկոսութեան, կաթուղիկոսական գահի էջմիածնում գտնուելը, նրա ասելով, վտանգաւոր է Ռուսաստանի համար, որովհետև, նախ, նա մօտ է Պարսկաստանի սահմաններին, երկրորդ, հեռու է պետութեան հսկողութիւնից և, երրորդ, հեռու ու գժուարամատչելի լինելով և հայութեան համար, առաջ է բերել Սոի կաթուղիկոսութիւնը, որ Զլատելով կաթուղիկոսի իշխանութիւնը, արգելք է լինում և Ռուսաստանին կաթուղիկոսի միջցով լիակատար բարոյական աղղեցութիւն ունենալու բոլոր հայերի վրայ. Այստեղ դարձեալ աչքի է ընկնում ոռւս հեղինակի անծանօթութիւնը, կամ, յաւ է ասել, թերի ծանօթութիւնը հայ կեանքին, հայ եկեղեցական պատմութեան էջմիածինը Պարսկաստանի սահմանի վերայ չէ, այլ բաւական հեռու. նա գըտնուում է Թիֆլիզում նստող Կովկասեան բարձր իշխանութեան անմիջական հսկողութեան ներքոյ. նա հեռու չէ հայութիւնից, այլ ընդհակառակը գտնուում է հայութեան կենդրոնում, ինչպէս որ պէտք էլ լինի և, վերջապէս, էջմիածինի հեռաւորութիւնից չէ, որ առաջ է եկել Սոի կաթուղիկոսութիւնը, այլ պատմական յայտնի հանգամանքներից, ինչպիսին և Աղթամարի կաթուղիկոսութիւնն է, չենք խօսում արդէն այն բանի մասին, որ Սոի աթուուր հոգևորապէս ենթարկուելով ընդհանուր կաթուղիկոսի իշխանութեան, չի Զլատում նրա լիազօրութիւնը բարոյական աղղեցութեան տեսակէտից:

Կաթուղիկոսական գահի փոխադրութիւնը Թէոդոսիա կամ այլուր մի վերին աստիճանի անյաջող և մտացածին միտք է, որ չէր կարող և երբէք էլ չի կարող իրականանալ, քանի որ կաթուղիկոսութիւնը հայութեան հոծ բազմութեան համար է, և ոչ թէ միայն Ռուսաստանում ցրուած և կղզեակներով ապրող սակաւթիւ հայ գաղութների համար, կաթուղիկոսական գահը չի կարող ուրիշ տեղ փոխադրուած լինել նամանաւանդ և այն պատճառով, որ նա կապուած է Լուսաւորչի անոււան հետ, Լուսաւորչի, որ առաջին կաթուղիկոսը լինելով, հիմնարկել է, նախախամութեան ցուցմունքով և հրաշալի տեսիլքով Միածնի տաճարը և Ս. Էջման տեղի կողքին հանտատել է իւր աթուուր, Պատմութիւնից յայտնի է, որ կաթուղիկոսական գահը նոյնիսկ հայոց իշխանութեան ժամանակները պատմական դանա-

զան հանգամանքներից յաճախ և երկար ժամանակ թափառել է Հայաստանի զանազան կողմերում, բայց ոչ մի տեղ հաստատուն կայան չի գտել և, վերջապէս, վերստին փոխադրուել է իւր ըը-նիկ տեղը: Յայտնի է նոյնապէս, որ կաթուղիկոսութիւնը և հայերին Ս. էջմիածնից բաժանելու համար, պատմական անցեալում փորձեր են արել ոչ թէ միայն Ս. Գեղարդը փոխադրելու, այլ և նոյնիսկ Ս. Դրիգորի աջը և մինչև իսկ Ս. էջմիածնի տաճարի քարերը, բայց չի յաջողել, որովհետև ժողովրդի աշխը միշտ ուղղուած է եղել դէպի Վաղարշապատ, դէպի իջման տեղը: Եւ մենք չենք էլ հասկանում, թէ ինչ կարիք է եղել և ինչ կարիք կարիք էլինել մտածել կաթողիկոսական գահի մի ուրիշ տեղ փոխադրելու մասին, քանի որ, կրկնում ենք, կաթուղիկոսութիւնը, կուկոնիկի ասելով, միայն կարծեցեալ իշխանութիւն է, և ոչ իրական, և քանի որ, կաւելացնենք մենք, կաթուղիկոսի բոլոր գործողութիւնները սահմանափակուած են որոշ օրէնքների շրջանում և կատարուել ու կատարուում են մերձաւոր իշխանութիւն անմիշջական հսկողութեան ներքոյ:

Կուկոնիկը գաթսնական թուականներին հայերի մէջ պեպառատիզմ չի նկատել, բայց կարծել է, որ ապագայում այն կարող է առաջ գալ նրանց մէջ կամ մամուլի քարոզութիւնների ազդեցութեան ներքոյ, կամ դրսի թելադրութեամբ: Ո՞րքան ճիշտ է եղել նրա այդ մտածողութիւնը և կատարուել է արդեօք նրա այդ գուշակութիւնն ապագայում: Այդ ինդրին պատասխանելու համար, կարենոր է նախապէս իմանալ, թէ արդեօք ինչ են հասկացել ուսւ մտաւորականները սեպառատիզմ ասելով, Եթէ նրանք դրանով հասկացել են Հայի ձգտումը՝ պահպանելու իւր լեզուն, իւր ազգային ինքնուրոյն եկեղեցին և դրա հետ կապուած, Հայ դրաբրոցը և իւր ազգային նուրիքական աւանդութիւնները, այդ տեսակ սեպառատիզմ կամ անջատականութիւն ոչ թէ առաջ է եկել հայերի մէջ յետոյ, մամուլի քարոզութեան ազդեցութեան ներքոյ, կամ թելադրուել է դրսից, այլ այն միշտ եղել է հայերի մէջ, կայ և պիտի էլ լինի, քանի որ գոյութիւն ունի հայ ազգը, որովհետև դժուար է երևակայել հայի գոյութիւնն առանց յիշեալ անհրաժեշտ և էսկան յատկութիւնների: Եւ Հայը շատ գեղեցիկ հասկացել ու հասկանում է, որ երբ նա կորցնէ այդ ամեն մի ազդի գոյութեան համար անհրաժեշտ պայմանները, կը դադարի մի առանձին ազգ լինելուց և ենթարկուած կը լինի ոչնչանալու, կուլ գնալու վտանգին, ուստի և նա իւր պատմական տառապալից անցեալում կրակի և ջրի միջից տնցնելով, պահպանել է այդ նուիրական յատկութիւնները որով և ապահովել է իւր գոյութիւնը:

Եւ այժմ, այս լուսաւորութեան և ինքնաճանաչութեան դարում չէ, որ Հայը պէտք է մոռանայ իւր պապերի այդ սուրբ աւանդը և գաղարի սիրել իւր գրականութիւնը, իւր անկախ եկեղեցին, իւր նուրիրական աւանդութիւնները, մի խօսքով, բովանդակ հայկականութիւնն իւր բոլոր ճիւղերով ու մասերով, Ուստի և սխալ և չափազանց մլասակար քաղաքականութեան են հետեած եղել նըրանք, որոնք կամեցել են բոնի խեղդել հայի այդ տեսակ հասկացուած անջատականութեան արտայայտութիւնները, ձեռնամուխ լինելով նրա եկեղեցուն, նրա դպրոցին, նրա լեզուին և նրա քաղաքակրթական հաստատութիւններին։ Դրանից միայն առաջ են եկել աղմուկ, շփոթ և յուղմունք, որ երկուստեք ատելութիւն ու թշնամութիւն սերմաննելով, բոլորովին հակառակ հետևանքի են հասցըրել։

Իսկ եթէ ոուս մտաւորականները սեպառատիզմ առելով, հասկացել են այդ խօսքը նրա իսկական մտքով՝ իբրև ձգտումն հայերի կողմից անջատուելու Ռուսաստանից և մի առանձին քաղաքական մարմին կազմելու, —մենք պէտք է ասենք և պնդենք, որ այդպիսի հակումն հայերն երբէք չեն ունեցել և չունին, որովհետեւ սվ որ միայն լաւ ճանաչում է հային, գիտէ նրա կացութեան պայմանները, նրա պատմական հայրենիքի վիճակը և միւս բոլոր հանդամանքները, նա կը հասկանայ, որ Հայն ոչ թէ միայն այդ չէ կարող անել, այլ որ նրան հէնց իւր ազգային շահերի տեսակէտից էլ օգտաւէտ չէ անջատուելը Ռուսաստանից, զրկուելը նրա հովանաւորութիւնից, որին համանելու համար, պատմական անցեալում այնքան ջանք ու աշխատանք է գործ դրել նա։ Պէտք է միայն լաւ ճանաչել հային, մի բան, որ Կուկոյնիկը, նրա ժամանակակիցները և դրանց յետնորդները չեն աշխատել անել, անդադար ենթադրութիւններ անելով, անդադար աջուահետակ խոտորելով և միշտ թշնամի ու վտանգ երևակայելով այնտեղ, որտեղ այդ չի եղել և չը կայ, ժամանակ է, վաղուց ժամանակ է, որ հասկանան, որ Հայը խաղաղ ժողովուրդ է, որ նա կամենում է առաջ գնալ, զարգանալ խաղաղ, կուլտուրական ճանապարհով և որ Կուկոյնիկների մտածողութիւններն և նրանց իրազործելու ձգտողների մաքառումներն անհող, անհիմն են, ուղղուած մեծաւ մասամբ հողմաղացների դէմ։

Ե. Շահազիզ

1911 յունուար 19

Ն. Նախիջևան